Հաստատում եմ

Գիտական հարցերի գծով պրոռեկտոր

Ռ. Հ. Բարխուդարյան

16.12.2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 14 -ի նիստի թիվ 12 արձանագրությունից

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի 2022 թ. դեկտեմբերի 14-ի 12-րդ նիստի:

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գինոսյանը, պ.գ.թ. Մ. Աբրահամյանը, պ.գ.թ. Վ. Գեղամյանը, պ.գ.թ. Ռ. Խաչատրյանը, դոցենտ Ք. Միրզոյանը: Նիստին հրավիրված էր պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Ստեփանյանը:

ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Տարոն Արամի Սաքոյանի՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» (գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Հովսեփյան) թեկնածուական ատենախոսության քննարկումը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գինոսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Ստեփանյանը, պ.գ.թ. Մ. Աբրահամյանը, պ.գ.թ. Վ. Գեղամյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Տարոն Արամի Սաքոյանի՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» ատենախոսության թեման պատմագիտության ոլորտում ունի գիտական և արդիական նշանակություն: Կարևորեցին հատկապես այն, որ ատենախոսությունում ռուս-թուրքական հարաբերությունները դիտարկվում, վերլուծվում են դրանցում Հայաստանի գործոնայնության, դրա կերպափոխումների պրիզմայով, ինչն այսօր առավել քան արդիական է դարձնում աշխատանքը: Այն հայերեն, անգլերեն, ռուսերեն ու թուրքերեն

51

տարբեր աղբյուրների ու գիտական, վերլուծական գրականության լայն բազայի հիման վրա կատարված ինքնուրույն աշխատանք է, գրված է գիտական պատշաճ մակարդակով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են ութ ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրներից և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային A4 շարվածքի 170 էջ:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության արդիականության, նպատակի և մի շարք հայեցակարգային կարևոր տեսակետների մասին: Ատենախոսության նպատակն ու առաջադրված հետազոտական խնդիրները հստակ են սահմանված, աշխատանքի բովանդակությունը և հիմնական եզրահանգումները բխում են դրանցից:

Ելույթ ունեցողներն անդրադարձան նաև ատենախոսության առաձին գլուխների բովանդակությանը: Առաջին գլխում («Ռուս-թուրքական հարաբերությունները 1990-ական թվականներին: Հավասարակշռման մեկնարկը փոխադարձ անվստահության ու հակասության պայմաններում», բաղկացած է երկու ենթագլխից) հեղինակը ներկայացնում է ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում Թուրքիայի նկրտումների փոխակերպումները և Հայաստանի տարածաշրջանային նշանակությունը, ինչպես նաև Ղարաբաղյան պատերազմի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների հավասարակշռման գործում:

Ատենախոսության երկրորդ գլխում («Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման փոխակերպվող միտումներում», բաղկացած է երեք ենթագլխից) ատենախոսը ներկայացնում է 2000-ական թթ. ռուս-թուրքական հարաբերությունների բազմաշերտ զարգացումը, դրանք պայմանավորող հիմնական գործոնները, մասնավորապես 2008 թ. ռուս-վրացական պատերազմը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Ռուսաստանի ու Թուրքիայի շարժառիթներն ու ակնկալիքները:

Երրորդ գլխում («Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների տարածաշրջանային և միջազգային հարթություններում», բաղկացած է երեք ենթագլխից) Մերձավոր Արևելքում և հետխորհրդային տարածքում աշխարհաքաղաքական գործընթացների և ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում ներկայացվում են հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության դինամիկան, ուժային հավասարակշռության հիմնախնդիրները և Հայաստանի դերն ու նշանակությունն իբրև տարածաշրջանային գործոն:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

Տ. Սաքոյանի ատենախոսության թեման ունի գործնական-կիրառական նշանակություն, արդիականություն և պարունակում է նորույթ: Աշխատանքում արծարծված դրույթները կարող են օգտագործվել ընդհանուր և հատուկ ուսումնական ծրագրերում, ձեռնարկներում, դասախոսություններում: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ՀՀ և ԼՂՀ մի շարք պետական կառույցների գործունեության համապատասխան ուղղությունների տեսական հիմնավորումների և դիվանագիտական փաստարկումների մշակման տեսանկյունից:

Ատենախոսության մի շարք դրույթներ, եզրահանգումներ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը և համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Այնուամենայնիվ, աշխատանքի հետ կապված կան որոշ դիտարկումներ ու դիտողություններ:

Մասնավորապես.

1. Ցանկալի կլիներ օգտագործել թուրքերեն ավելի հիմնարար գրականություն, օրինակ՝ Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» (“Stratejik Derinlik”) աշխատանքը, ինչը կօգներ վերհանել Հարավային Կովկասի նկատմամբ Թուրքիայի ռազմավարության աշխարհաքաղաքական տեսական մոտեցումներն ու շերտերը, Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում ընկալումները և այլն:

2. Թեև հիմնականում խնդրի վերաբերյալ առկա է վերլուծական շարադրանք՝ ցանկալի կլիներ, որ հեղինակը մատուցված նյութն ավելի պարզորոշ դարձնելու նպատակով Հարավային Կովկասում Թուրքիայի և Ռուսաստանի՝ հետսառըպատերազմյան շրջանի առաջին 10-ամյակի քաղաքականության վերաբերյալ տար գնահատականներ:

3. Աշխատանքն էլ ավելի կշահեր, եթե 2-րդ գլխի առաջին ենթագլխում 2000-ական թվականների առաջին տասնամյակում ռուս-թուրքական հարաբերություններում զարգացումների ներկայացման ու վերլուծության մեջ համակարգված ձևով մատնանշվեին երկկողմ դինամիկան պայմանավորող հիմնական գործոնները:

4. 3-րդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում է սիրիական և ուկրաինական հակամարտությունների զարգացումն ու ազդեցությունը Ռուսաստան-

Թուրքիա հարաբերությունների վրա: Անշուշտ դրանք այն գործընթացներն էին, որոնք էական ազդեցություն ունեցան երկկողմ այդ հարաբերությունների վրա, մինչդեռ, կարելի էր ենթագլխում ավելի շատ քննարկել Հարավային Կովկասում այդ դերակատարների քաղաքականության վրա դրանց ազդեցությունը:

5. Աշխատանքում օգտագործվել է գիտական բարձր արժեք չունեցող աշխատանք՝ էջ 28, հղում 99:

6. Աշխատանքի բովանդակությունն ավելի ընդարձակ է, քան ենթադրում է վերնագիրը:

Այնուամենայնիվ, վերոնշյալ դիտողություններն ամենևին չեն ստվերում աշխատանքի ընդհանուր արժեքը: Կարծում ենք, որ Տարոն Սաքոյանի «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» ատենախոսությունը հաջողված և նորույթ պարունակող գիտական աշխատանք է:

ՈՐՈՇԵՑԻՆ. Տարոն Սաքոյանի՝ «Հայաստանի գործոնը ռուս-թուրքական հարաբերությունների համատեքստում 1991-2015 թթ.» ատենախոսությունը բավարարում է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի
թյուրքագիտության ամբիոնի վարիչ,
պ.գ.թ., պրոֆեսոր՝ Ալ. Սաֆարյան

Նիստի քարտուղար՝ Մ. Մելքոնյան

16-ը դեկտեմբերի 2022 թ.

ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր Ալ. Սաֆարյանի
ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ.՝ Մ. Հովհաննիսյան